Կաթոլիկ եկեղեցին Ամերիկայում. Կաթոլիկ եկեղեցին Ամերիկայում ամենամեծ և հարուստ եկեղեցիներից մէկն է: Նա մեծ կալուածներ ունի յատկապէս բազմամարդ քաղաքներում և աշխատում է իւր հաւատացեալներին զետեղել նոյն կալուածների վերայ և եկեղեցու շուրջը, որպէս զի ամբողջ թաղամասեր կազմէ նրանցից և ընտրութիւնների ժամանակ իւր ներկայացուցիչներն ունենայ կամ կաթոլիկ պաշտօնեաներ նշանակել տայ այդ մասերի կառավարութեան համար: Օրաթերթերի մեծագոյն մասը նոյնպէս կաթոլիկների ձեռքն է և եպիսկոպոսների կամ միւս պաշտօնեաների գործառնութեան և շարժումների մասին մանրամասն լուրեր են տալիս: Կաթոլիկութիւնը Ամերիկայում աճում է յատկապէս Եւրոպայի կաթոլիկ տարրերի՝ լեհացիների, իտալացիների, իրլանդացիների՝ գաղթականութեամբ: Կաթոլիկ եկեղեցու հարստութեան մասին գաղափար տալու համար բաւական է յիշել, որ Նիւեորքում 160 միլիոն մարկի կարողութիւն ունի և միայն 24 միլիոն պարտք: Հոգևորականութիւնը մեծ ջանք է գործ դնում եկեղեցու հարստութիւնը մեծացնելու, նոյն իսկ միջոցների մէջ խտրութիւն չդնելով: Պապականութեան ազդեցութիւնը Ամերիկայի կաթոլիկութեան վերայ համեմատաբար թոյլ է, և ժողովրդի մասնակցութիւնը եկեղեցական գործերի մէջ աւելի մեծ, քան Եւրոպայի կաթոլիկ երկրներում:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Գերմանիայի Հաննովեր նահանգի մի խումբ պաստորներ միացել են և մի ընկերութիւն կազմել «Աւետարանական ապատութիւն» անունով: Ընկերութեան ծագման պատճառը ներկայ ժամանակի արտաքոյ կարգի լուրջ և մի և նոյն ժամանակ յուսալից պահանջներն են: Ժամանակի լրջութիւնը ծագում է աստուածաբանական գիտութեան և եկեղեցու հակադիր զարգացումից, որ նկատելի է վերջին տասնամեակում ոչ միայն Հաննովերի, այլ և Գերմանիայի միւս փոքր պետութիւնների եկեղեցիներում: Հաննովերը, թէև քաղաքանապէս Պրուսիայի մի նահանգն է այժմ, բայց եկեղեցու ներքին անկախութիւնը մնացել է թագաւորութեան անկումից յետոյ ևս: Մինչդեռ նորագոյն աստուածաբանութիւնը պատմական-քննական եղրակացութիւնները կամենում է քրիստոնէական կրօնի հասկացողութեան և հաւատի հիմք դարձնել, եկեղեցական վարչու-

թիւնը, որ մեծ մասամբ պահպանողական պատասխանների ձեռքն է, ամեն միջոց գործ է դնում խափանել այն և ճնշել նորագոյն ուղղութիւնը։ Բայց չնայելով սորան՝ օր ըստ օրէ աճում է եկեղեցու գիտնական աստուածաբանութեան և աւետարանական ազատութեան կողմնակիցների թիւը։ Արդէն Հոնովերի նահանգի այլ և այլ կողմերում կային փոքրիկ ընկերութիւններ, որոնց նպատակն էր պաշտպանել և տարածել աւետարանական ազատութեան դաղափարը, բայց անցեալ դեկտ. 5-ին Հանովեր քաղաքում հիմնուել է մի ընդհանուր կազմակերպութիւն, որի նպատակն է միացնել բոլոր ազատամիտ պատասխանները և աստուածաբաններին միացեալ ուժերով իրենց դաղափարները կեանքի մէջ իրականացնելու համար։ Մինչդեռ պահպանողական կուսակցութիւնը վաղուց կազմակերպուած էր և եկեղեցական վարչութեան մէջ իշխող լինելով, աւելի նպաստաւոր պայմանների մէջ է գտնուում, «նորագոյն քրիստոնէութեան» ներկայացուցիչները դեռ նոր պիտի կազմակերպուեն և կարգաւորեալ գործունէութիւն սկսեն։ Սրանց ոգևորում է այն դաղափարը, թէ կոչում ունին եկեղեցին աւելի կենդանացնելու և քրիստոնէութիւնը ժողովրդական կեանքի հիմք դարձնելու, ջերմացնելով հետզհետէ դատանաբանական տեսական խնդիրներով սառած սրտերը։ Մէջ ենք բերում նորակազմ միութեան կանոնադրութեան էական կէտերը մեր ընթերցողներին որոշ դաղափար տալու համար։

Միութեան ընդհանուր նպատակն է կրօնական և եկեղեցական կեանքը ձևակերպել աւետարանական ազատութեան հոգուով. եկեղեցական աւանդական վարդապետութեան և նորագոյն աշխարհայեցողութեան մէջ եղած հակադրութիւնը կարելի է վերացնել միայն քրիստոնէական ճանաչողութեան և եկեղեցու կազմակերպութեան ներկայ կեանքին համապատասխան դարդացմամբ։ Միութեան գործնական նպատակը աւելի պարզում է հետևեալ մանրամասնութիւններով։

Ա. Զարթեցնել, պաշտպանել և խորացնել կրօնական և եկեղեցական կեանքը կենդանի և ազատ բարեպաշտութեամբ։

Բ. Անկախ գործակցութեան հրաւիրել համայնքի չափահաս բոլոր քրիստոնեաներին։

Գ. Ազատել եկեղեցու բարեգործութեան և արտաքին առաքելութեան, ինչպէս և այն բոլոր ձեռնարկութիւններին, որոնք նպաստում են ժողովրդի բարոյական և հոգևոր յառաջադիմութեան։

Դ. Աւետարանի ազդեցութեամբ յառաջ եկած բոլոր ուղ-

զութիւնների հաւասարութիւն։

Ե. Կոնֆիրմացիային (պատանիների կրօնական քննութիւնը, որից յետոյ համայնքի մէջ են ընդունւում, կաթոլիկների մէջ դրոշմը, հին եկեղեցու «երեխաների» ընդունելութիւնը համայնքի մէջ) զուտ կրօնական ձևակերպութիւն տալ, առանց ուխտի կամ երդման պարտաւորութեան։

Զ. Ծխական վարչութեան և ժողովների կարգաւորութեան մէջ բարեփոխութիւն մտցնել աշխարհական տարրը զօրացնելու ուղղութեամբ։

Է. Համայնքների ներկայացուցչութեան մէջ զորացնել ազատ ուղղութեան տարրերը։

Ը. Համայնքների և գաւառական ժողովների ինքնակառավարութեան և գործունէութեան իրաւունքն ընդարձակել։

Թ. Համայնքի կամ ծուխի մէջ ընդարձակել կանանց իրաւունքները։

Ժ. Պաշտպանութիւն տալ ազատ, գիտական քննադատութեան և կրօնական համոզումների արտայայտութեան համայնքի բոլոր անդամների, ինչպէս և պաստորների և ուսուցիչների համար։

ԺԱ. Զեռնադրութիւնը կարգաւորել զուտ կրօնական տեսակէտով։

ԺԲ. Կրօնի ուսուցման ժամանակակից բարեփոխութիւն եկեղեցու և դպրոցի մէջ։

Միութիւնը իւր նպատակին հասնելու համար հետևեալ միջոցներն է գործադրում։

Ա. Ընկերութիւնների և նրանց անդամների կենդանի յարաբերութիւն միմեանց մէջ։

Բ. Կազմակերպում է դասախօսութիւններ և հակաճառութիւններ։

Գ. Տարածում է թռուցիկ թերթեր։

Դ. Հրապարակային ցոյցեր է կազմակերպում։

Ե. Նպաստում է բարեկամ և զաղափարակից մամուլին։

Զ. Հիմնում է դրամարկղ օգնութեան և արտաքոյ կարգի կարիքների համար։

Է. Միութիւնն ունի իւր յատուկ թերթը։

Chr. d. Chr. W.

Լուբերական եկեղեցին հիւսիսային Ամերիկայում.—Լուբերական եկեղեցին հիւսիսային Ամերիկայում 67 ժողով ունի

7703 պատտորով և 133,827 համայնք։ Հաղորդուողների թիւը 1905 թուին եղել է 1,842,339 հոգի։ Պետութիւնից բոլորովին անկախ ծխական դպրոցների թիւը 4399 է, ուսուցիչների թիւը 2668, իսկ աշակերտներինը՝ 245,524 հոգի։ Կիրակնօրեայ դպրոցների թիւը 6667 է, որոնց պաշտօնեաների և ուսուցիչներինը՝ 67,233, իսկ աշակերտներինը՝ 664,693։ Եկեղեցական վարչութիւնները առաքելութեան և ուրիշ նպատակների համար նուէր են հաւաքել 1,622,105 դոլլար։ Նոքա 24 աստուածաբանական ուսմինարիաներ ունին, 41 կոլլէջ, 38 ճեմարան, աղջկանց բարձր դպրոց՝ 10, հիւանդանոց՝ 25, որբանոցներ՝ 48, ծերունիների ապաստարաններ և ապահովարաններ՝ 20, հիւանդապահութեան դպրոցներ կամ տարկաւագանոցներ՝ 8։ Երջիկ և ծովային առաքելութիւնների թիւը 13, իսկ հեթանոսների մէջ աւետարան քարոզողներին՝ 10, լութերական լրագիրների թիւը 70, չհաշուելով կիրակնօրեայ դպրոցների 26 թերթերը։ Բարեգործական և կրթական գործի համար ծախսուում է 12,184,166 դոլլար։ Մատենադարաններ ունին, որոնց մէջ հաւաքուած են 424,926 հատոր գիրք։ Բարձր դպրոցների ուսուցչապետների թիւը 945 է, ուսանողներինը՝ 12970, որոնցից 1624 հոգի արդէն քարոզչութեան պաշտօնի համար են պատրաստուում։ Սորա վերայ պիտի աւելացնել 1903 ուսանողուհիներ։ Բարեբարուած են հատատութիւններից 31,691 հոգի։

Ահա թուեր, որոնք ցոյց են տալիս, թէ Լենչիսի մեծ և կենդանի ոյժ է լութերականութիւնը հիւսիսային Գերմանիայում, մանաւանդ որ այս դաւանութեան պատկանողներից շատերը ցրուած են այստեղ և այնտեղ և համայնք չեն կազմում։ Այս տեղեկութիւնները հանուած են Chronik der Christ. Welt թերթից։

ԱՆԳԼԻԱ

Անգլիայում վերջին տարիները լուրջ կերպով աշխատում են, որ կիւրակէն սուրբ պահեն։ Այս հարցում միացել են քրիստոնէական եկեղեցու բոլոր պետերը, թէ անգլիական, թէ Հռոմէական և թէ ազատ աւետարանական. այս մի նշանաւոր երևոյթ է։ Յունուարի մէկին յիշեալ եկեղեցիների արքեպիսկոպոսները (Կենտերբերի, անգլ. Կաթոլիկ.) և ազատ աւետարանական ազգային եկեղեցու նախագահը դիմել են անգլիացւոց հետևեալ հաւաքական թղթով։